ՊԱՏՄԱԿԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆ*

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ Ս. ՕԾՈՒՄՆ

Ա.

Հայոց Եկեղեցւոյ աւանդութիւնների համաձայն կաթողիկոսական ընտրութիւնը կատարուել կարող է նախորդի թաղումից անմիջապէս յետոյ, կամ երբ յարմարութիւն լինի: Բայց Պոլոժենիայի հաստատութիւնից յետոյ՝ ուղիղ թէ սխալ հասկացողութեամբ՝ սովորական է դարձել նախորդ կաթողիկոսի թաղումից մի տարի յետոյ նշանակել: Ընտրութեան մասին կարգադրութիւն է անում Ս. Էջմիածնի Սինօդը այսպէս կոչուած «ծանուցողական հրովարտակներով»: Սինօդում յատուկ օրագրութիւն է կազմւում կաթողիկոսական ընտրութեան օրը որոշելու և բոլոր թեմերին յայտարարելու համար: Ծանուցողական հրովարտակի մի-մի օրինակ անմիջապէս ուղարկւում է Ռուսաստանի հայ առաջնորդներին, իսկ Տաճկաստանի և Պարսկաստանի թեմերին՝ Կովկասի փոխարքայի, արտաքին գործոց նախարարի և յիշեալ տէրութիւնների մէջ եղած ռուս դեսպանների միջոցով: Տաճկաստանի առաջնորդները, Երուսաղէմի պատրիարքը, Սսի և Աղթամարի կաթողիկոսներն ստանում են Կ. Պոլսոյ պատրիարքի միջնորդութեամբ, իսկ Պարսկաստանի առաջնորդները՝ դեսպանից անմիջապէս: Բայց միևնոյն ժամանակ Ս. Սինօդը մի այլ թղթով յայտնում է Կ. Պոլսոյ պատրիարքին և Պարսկաստանի առաջնորդներին, թէ ծանուցողական հրովարտակներն ուղարկուած են կառավարութեան ձեռքով, որպէսզի նոքա նախօրօք իրազեկ լինեն:

Ծանուցողական հրովարտակի մէջ Ս. Սինօդը առաջնորդներին և նրանց միջոցով ամբողջ ժողովրդին մի անգամ ևս յայտնելով կաթողիկոսի մահուան մասին, նշանակում է յաջորդի ընտրութեան օրը և հրաւիրում ներկայ լինել Մ. Աթոռում թեմի ժողովրդի կողմից ընտրուած մի պատգամաւորի հետ, հակառակ դէպքում գրաւոր կարծիք յայտնել Ս. Սինօդին իրենց թեկնածուի մասին:

Ռուսաստանի առաջնորդները ծանուցողական հրովարտակներն ստանալուց յետոյ տեղական նահանգապետի գիտութեամբ՝ ընտրութիւն են

---

* Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Ա Հովսեփյան Կաթողիկոսի՝ վարդապետության շրջանում գրված այս հոդվածը արտատպված է «Ազգագրական հանդես»-ից (1910 թ., էջ 189-200):

նշանակում նախ պատուիրակների և նրանց ձեռքով ամբողջ թեմի կողմից մի աշխարհական պատգամաւոր ընտրելու համար. թեմի առաջնորդն ի պաշտօնէ համարւում է ամբողջ հոգևոր դասի ներկայացուցիչ: Տաճկաստանում աշխարհիկ պատգամաւորն ընտրւում է Գաւառական ժողովի կողմից և պատրիարքարանի վկայութեամբ իրաւունք ստանում մասնակցելու Ս. Էջմիածնում գումարուելիք ժողովին:

Հայրապետական ընտրութեան համար նշանակուած ժամանակից մի քանի օր առաջ սկսւում են հաւաքուել Մ. Աթոռում Տաճկաստանի, Պարսկաստանի և Հնդկաստանի, Ռուսաստանի թեմերի առաջնորդներն ու աշխարհիկ պատգամաւորները: Նախօրօք միաբանութեան անդամներից ընտրւում է մի Կարգադիր յանձնաժողով՝ պատգամաւորներին պատուաւոր կերպով ընդունելու և հիւրասիրելու համար: Առաջնորդներին ընդունելու համար սովորութիւն էր ընդառաջ գնալ: Բոլոր առաջնորդներն ու աշխարհիկ պատգամաւորները իրենց համար յատկացրած սենեակներում տեղաւորուելուց յետոյ հիւրընկալ վարդապետի կամ յանձնաժողովի անդամներից մէկի առաջնորդութեամբ ներկայանում են տեղապահին և յանձնում իրենց ներկայացուցչութեան պաշտօնական թղթերը, իսկ վերջինս Ս. Սինօդին՝ ցուցակի մեջ անցնելու համար: Չհաշուելով Եւրոպայի և Ամերիկայի նորահաստատ թեմերը, Հայոց եկեղեցու թեմերի թիւը ներկայումս 72 է, որից 64 տաճկահայոց, իսկ 2 պարսկահայոց: Տաճկահայոց թեմերից 44 Կ. Պոլսոյ պատրիարքի իրաւասութեան են ենթարկւում, 13 Կիլիկիոյ կաթողիկոսի, 5 Երուսաղէմի պատրիարքի, իսկ 2 Աղթամարի կաթողիկոսի: Բայց ռուսաց կառավարութիւնն ընդունում է Տաճկաստանում միայն 47 թեմ, 2 կաթողիկոսութիւններն ու Երուսաղէմի պատրիարքութիւնը համարելով մի-մի թեմ: Ըստ այսմ կաթողիկոսական ընտրութեան մասնակցել կարող են ընդամենը 55 թեմ, մի-մի հոգևորական և աշխարհական պատգամաւորներով. բացի դորանից, ըստ պոլոժենիայի, ընտրութեան մասնակցում են Սինօդի անդամները, որոնց թիւը կարող է 8 լինել և միաբանութեան աւագագոյն 7 անդամները, ուրեմն ընդամենը 125 հոգի:

Ընտրութեան պաշտօնական գործողութիւնն սկսւում է աշխարհիկ պատգամաւորների երդմամբ: Նշանակած օրը բոլոր պատգամաւորները հաւաքւում են վեհարան և այնտեղից եկեղեցի իջնում: Ամենից առաջ գնում է կաթողիկոսութեան տեղապահը, նորա կողքից կառավարութեան ներկայացուցիչը, ապա Երուսաղէմի պատրիարքի, Սսի և Աղթամարի կաթողիկոսների, Կ. Պոլսոյ պատրիարքի ներկայացուցիչները, եթէ վերջիններս անձամբ չեն մասնակցում, Սինօդի անդամներն ու միաբանութեան ներկայացուցիչները պրոկուրորի հետ, ձախ կողմից թեմական առաջնորդները կամ նրանց ներկայացուցիչները աւագութեան կարգով, ապա աշխարհական պատգամաւորները և ի վերջոյ Սինօդի ատենադպիրը, իւր օգնականներով: Իջման սեղանի առաջ դրւում է կարմիր մահուդով ծածկուած սեղան պատգամաւորների համար, վերան խաչ, աւետարան, երկու աշտանակ վառուող մոմերով և ընտրութեան վերաբերեալ

օրէնքներ ու թղթեր: Պատգամաւորները պատարագը և Ն.(որին.-խմբ.) Կայսերական մեծութեան համար կատարուած մաղթանքը լսելուց յետոյ՝ երդւում են Իջման սեղանի առաջ խղճի մտօք կատարելու իրենց պարտաւորութիւնը:

Երկրորդ օրը կատարւում է չորս թեկնածուների ընտրութիւնը, որոնցից ապա վերջնական ընտրութեան ժամանակ երկուսը, ի հաստատութիւն առաջարկելու համար: Հայոց եկեղեցու աւանդութիւնների համաձայն պէտք է միայն մէկին ընտրել, ձայնից առաւելութիւն ստացածն էլ ս. օծումն ընդունելուց յետոյ հռչակւում է կաթողիկոս: Չորս և ապա երկու վերջնական թեկնածուներ ընտրելու ձևը նորամուծութիւն է 1836 թ. պոլոժենիայի հաստատութիւնից յետոյ: Նշանակուած ժամին պատգամաւորները դարձեալ հաւաքւում են վեհարան և հանդիսաւոր կարգաւորութեամբ եկեղեցի իջնում: Եկեղեցւոյ մէջ դրւում են սեղաններ կարմիր մահուդով ծածկուած և շարւում աթոռներ պատգամաւորների համար: Կենտրոնում նստում է տեղապահը, երեսը դէպի Իջման սեղանը, աջ կողմից երկու կաթողիկոսների և երկու պատրիարքների ներկայացուցիչները և ապա ըստ աւագութեան մնացած հոգևորականութիւնը: Տեղապահի ձախ կողմից նստում են աշխարհիկ պատգամաւորները կոչման և աւագութեան համաձայն: Կառավարութեան ներկայացուցչի և պրոկուրորի համար դրւում է առանձին սեղան հարաւային սեան մօտ, իսկ ատենադպրի և իւր օգնականների համար՝ հիւսիսային սեան մօտ: Ամենքն իրենց տեղերը բռնելուց յետոյ պատշաճաւոր աղօթքով բացւում է ժողովը: Տեղապահը, իբրև նախագահ, մի ճառով բացատրում է ժողովի կոչումն ու նշանակութիւնը և հրաւիրում ամենքին խղճի մտօք կատարելու իրենց վրա դրուած պարտաւորութիւնը: Սինօդի պրոկուրորը կարդում է փոխարքայի առաջադրութիւնը ժողովի բացման մասին, իսկ ատենադպիրը բոլոր եպիսկոպոսների ցանկը, որոնք ընտրելի են համարւում: Ժողովականներից ցանկացողները յայտնում են իրենց կարծիքը թեկնածուների մասին և ապա քուէարկութիւն է սկսւում կրտսերագոյն աշխարհիկ պատգամաւորից: Պրոկուրորը մի առ մի արձանագրում է պատգամաւորների կարծիքները և վաւերացնում նրանց ստորագրութեամբ: Նախագահը բոլոր ձայները և գրաւոր յայտնած կարծիքները ի մի գումարելով՝ չորս առաւելագոյն քուէ ստացածներին հռչակում է թեկնածուներ վերջնական ընտրութեան համար:

Երկու թեկնածուների ընտրութիւնը կատարւում է հետևեալ օրը. պատգամաւորները դարձեալ վեհարանից տաճար են իջնում նոյն հանդիսաւորութեամբ և գործողութիւնն սկսում պատշաճ աղօթքով: Մինչև վերջին ընտրութիւնը սովորութիւն էր, կառավարութեան կողմից հաստատուած հրահանգների համաձայն՝ ընտրութիւնը կատարել բաց քուէարկութեամբ, երբ կարդացւում էր աւագագոյն թեկնածուի անունը, պատգամաւորը վեր էր կենում և բարձր ձայնով արտասանում՝ «ընտրեմ» կամ «ոչ ընտրեմ»: Բայց վերջին

ընտրութեան ժամանակ փոխարքայի կարգադրութեամբ այդ գործողութիւնը կատարուում է գաղտնի քուէարկութեամբ: Ճառախօսութիւններ լինում են նախքան ընտրութիւնը, եթէ ժողովականներից որևէ մէկը ասելիք ունի: Բայց մասնաւոր ժողովներում նախընթաց օրեր արդէն մտքերի փոխանակութիւն է կատարուած և պատգամաւորները որոշ եզրակացութեան հասած: Պաշտօնական կերպով մտքերի այդ փոխանակութիւնը կատարուում է և չորս թեկնածուների ընտրութեան ժամանակ: Այժմ պատգամաւորը խղճի և Աստուծոյ առաջ պատասխանատու՝ տալիս է իւր վերջնական որոշումը. սրբազան գործողութեան մի րոպէ, երբ ժողովրդի ձայնը նուիրագործուում է Տիրոջ սեղանի առաջ որպէս Աստուծոյ ձայն: Բացակայ պատգամաւորների գրաւոր կարծիքը գործնական նշանակութիւն չունի այս անգամ: Առաւելագոյն քուէ ստացող երկու բարձրաստիճան հոգևորականները ընդունուում են որպէս կաթողիկոսական աթոռի թեկնածուներ, որոնք պիտի առաջարկուին ի հաստատութիւն: Ընտրութիւնը վերջանալուց յետոյ, նախագահը բարձրաձայն յայտնում է ժողովի փակումը և երգում են «Թագաւոր փառաց Աստուած» շարականը, իսկ զանգահարութիւնը աւետում է ընտրութեան յաջող վերջաւորութիւնը. հեռագրեր են պատրաստում որ տեղապահը ժողովի կողմից շնորհաւորէ և յայտնէ ընտրեալներին ժողովի որոշումը: Ապա բացւում է տաճարի դուռը և պատգամաւորները դուրս են գալիս զոյգ-զոյգ, երգելով «Էջմիածինն ի Հօրէ» շարականը: Իսկ դուրսն սպասող ժողովուրդը ցնծութեան և «կեցցէների» աղաղակներով ողջունում է ընտրութեան բարի վախճանը:

Պատգամաւորների փոքր-ինչ հանգստանալուց յետոյ՝ պաշտօնական ճաշի են հրաւիրուում բոլոր պատգամաւորներն ու պատուաւոր հիւրերը, միաբանութեան հետ: Ճաշկերոյթ լինում է վանքի ընդարձակ սեղանատանն ամենայն օր, բայց այս օրը աւելի շքեղ և հանդիսաւոր: Բաժակաճառերը, հասկանալի է, գլխաւորապէս լինում են նորընտիր Հայրապետի, աթոռի, ընդհանուր հայութեան և միաբանութեան մասին:

Ապա պաշտօնական թղթերը մաքուր գրելուց և ստորագրութիւններով վաւերացնելուց յետոյ՝ մի եպիսկոպոսից և երկու աշխարհականներից կազմուած պատգամաւորութեան մատուցանուում է տ. փոխարքային՝ ներքին գործոց տ. նախարարի միջնորդութեամբ Ն. Կայսերական մեծութեան ի հաստատութիւն ուղարկելու:

Բ.

Հայրապետի ընտրութեան գործողութիւնից մինչև հաստատութիւնը մի քանի ամիս է տևում: Թէպէտ երկու թեկնածուներն էլ հաւասար են օրէնքի առաջ և կայսրը որին կամենայ կ'հաստատէ, բայց սովորաբար յարգւում է ազգի ցանկութիւնը և առաւելագոյն քուէ ստացողն է հաստատուում: Մինչև այժմ

միայն մի բացառութիւն է կատարուել յանձին Տ. Մակար կաթողիկոսի: Հաստատութեան հրովարտակը կայսեր կողմից ստորագրուելուց յետոյ՝ ներքին գործոց նախարարը յայտնում է այդ մասին փոխարքային և սա՝ տեղապահին: Վերջինս շրջաբերական հեռագրով յայտնում է Կ. Պոլսոյ պատրիարքին, Ռուսաստանի և միւս առաջնորդներին: Այդ առթիւ պատարագ է մատուցանւում Մ. Աթոռում և Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում, թագաւորկայսեր անունը յիշելուց յետոյ՝ տեղապահը քարոզ է խօսում և հայրապետական աթոռի վրայից վերցնում է սև քօղը: Պատարագից յետոյ կատարւում է նաև կայսեր համար գոհացողական մաղթանք: Այդ օրուանից յիշատակել են սկսում նաև նորահաստատ կաթողիկոսի անունը եկեղեցիների մէջ, բայց այս անկանոնութիւն է. նորընտիր Հայրապետի անունը պիտի յիշատակուի օծումից յետոյ: Նախնի աւանդական կարգը առաջին անգամ խանգարուել է Ներսէս Ե. կաթողիկոսի ժամանակ: Մինչ այդ կաթողիկոսի անունը Մ. Աթոռում յիշատակւում էր օծումից յետոյ, նորապսակ կաթողիկոսը յիշատակում է իւր նախորդների անունները, իսկ սարկաւագները «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզի մէջ նորապսակ կաթողիկոսի անունը: Միւս թեմերում կաթողիկոսի անունը յիշատակւում էր անդրանիկ կոնդակի ընթերցումից յետոյ:

Ապա Սինօդը - երկու եպիսկոպոս և երկու վարդապետ պատուիրակ է ընտրում և ուղարկում նորընտիր Հայրապետին Աթոռ հրաւիրելու՝ եթէ նա Մ. Աթոռից դուրս է՝ Ռուսաստանի կամ Տաճկաստանի թեմերում: Պատուիրակներն իրենց հետ վերցնում են հայրապետական խաչ, գաւազան, արծիւ ոտքերի տակ փռելու և ոսկեթել, ասեղնագործ քօղ «Գառն Աստուծոյ» պատկերով՝ առաջ բռնելու համար: Նոյնպէս և հայրապետական պանակէ և մատանի: Ճանապարհին ամէն տեղ հայ ժողովրդից և կառավարութիւնից ստանում է հայրապետական պատիւ և ընդունելութիւն: Քաղաքների և հայ հասարակութեանց ներկայացուցիչները մատուցանում են աղուհաց, ժողովրդի պատուիրակներն ու ներկայացուցիչները ուղերձներով և ճառերով յայտնում են իրենց յարգանքը կամ կարիքները: Տեղական նահանգապետը ներկայանում է «Բարի գալուստ» մաղթելու: Քաղաքներում սովորաբար Հայրապետն իջնում է առաջնորդարաններում, երբեմն և պատուաւոր քաղաքացիների տներում և հիւրասիրւում է հասարակութեան կողմից ընտրուած յանձնաժողովների ձեռքով: Եթէ Տաճկաստանից է գալիս նորընտիր Հայրապետը՝ սահմանագլխից, հակառակ դէպքում նորընտիր Հայարպետի բնակութեան քաղաքից, ուղեկցում է նրան կառավարութեան բարձաստիճան ներկայացուցիչը: Շքախմբի անդամներն են կազմում էջմիածնից գնացած պատուիրակները և թեմի առաջնորդը, որ ուղեկցում է Հայրապետին իւր թեմի սահմաններում: Նորընտիր Հայրապետները օծումից առաջ կամ յետ սովորաբար մի անգամ այցելում են կայսեր. բայց այս արարողութիւնը կ'նկարագրենք առանձին գլխով:

Նորընտիր Հայրապետի մուտքը Մ. Աթոռ այսպէս է լինում: Պատուիրակութեան նախանդամը, ինչպէս ճանապարհի ընթացքում հեռագրով տեղեկու-

թիններ է տալիս ս. տեղապահին Հայրապետի ուր լինելու մասին, այնպէս էլ նախապէս յայտնում է Մ. Աթոռ հասնելու օրն ու ժամը: Վաղարշապատի հասարակութիւնը և Մ. Աթոռի միաբանութիւնը պատրաստում են վայելուչ կերպով ընդունել իրենց Հայրապետին, զարդարելով փողոցները կանաչով, ժապաւէններով, պատշգամբներից կախուած գորգերով և կարպետներով: Թարմ կանաչից և տերևներից, եթէ ժամանակը ներում է, կանգնում են յաղթական կամարներ. ճանապարհի այն մասում, որտեղից պիտի սկսուի ընդունելութեան թափորը, մինչև Մ. Տաճար ծածկւում է կանաչով և ծաղիկներով: Շրջակայ գիւղերի և Երևանի ժողովուրդը թափւում է Մ. Աթոռ՝ տեսնելու նորընտիր Հայրապետի գալուստը: Տեղապահը Սինօդի անդամներով ընդառաջ է գնում՝ Էջմիածնի կայարանում կամ Երևանում «Բարի գալուստ» ասելու և ապա վերադառնում են Մ. Աթոռ՝ միաբանութեան հետ թափորով ընդունելու: Երբ հեռուից երևում է ընթացքը, սկսում են հնչեցնել բոլոր զանգերը: Մ. Աթոռի միաբանութիւնը շուրջառ ձգած ըստ աւանդութեան շարւում է այնտեղ, որտեղից պիտի սկսուի եկեղեցական թափորը. սովորաբար վանքի հիւսիս-արևմտեան արտաքին մեծ դարբասի առաջ եղած հրապարակում: Հայրապետի կառքը՝ շրջապատուած ոստիկաններով և պահնորդ ձիաւորներով, դանդաղ մօտենում է վանքի պարիսպներին, այսպիսի դասաւորութեամբ: Ամենից առաջ գնում են խաչ, գաւազան բռնող վարդապետները, ապա հայրապետական ցուպ բռնող «գաւազանակիրը», ապա Հայրապետի կառքը, յետևում կանգնած երկու կարմրազգեստ և արծաթագլուխ ասաները ձեռքներին: Հայրապետի կառքին հետևում են միաբանութեան պատուիրակները և առհասարակ շքախմբի անդամները: Բազմաթիւ կառքերով հետևում են հասարակութեան ներկայացուցիչներ և ձիաւորներ:

Նորընտիր Հայրապետը հասարակութեան աղն ու հացը ընդունելուց և ներկայացուցիչների ողջոյնի խօսքերը լսելուց յետոյ՝ օրհնում է և ապա շուրջառ առնելով՝ մնում է ամպհովանու տակ, որ սովորաբար բռնում են հասարակութեան պատուաւոր անդամներ կամ շապկազգեստ դպիրներ: Ամպհովանու յետևից գնում է գաւազանակիր վարդապետը, հայրապետական ցուպը բարձր բռնած, կողքից շարւում են չորս քշոցակիրներ, Հայրապետի առաջ բռնում են ոսկեթել քօղ ասեղնագործ «Գառն Աստուծոյ» պատկերով, չորս բուրվառակիր յետ-յետ գնալով՝ խնկարկում են Հայրապետին: Միաբանութիւնը դասաւորւում է զոյգ-զոյգ ըստ աւագութեան, աւագագոյնները Հայրապետի մօտ, միաբանութեան առաջից՝ իւրաքանչիւր դասի գլխին դարձեալ շուրջառազգեստ մի-մի քահանայ կամ վարդապետ՝ հայրապետական խաչն ու գաւազանը բարձր բռնած, ապա երգեցիկ դպիրները զոյգ-զոյգ, խաչակիրներն ու խաչվառակիրները, լապտերակիրներն ու մոմակալները և թափորի գլխին կարմրազգեստ շաթիրները ձեռքներին արծաթեայ երկաթագլուխ ասաներ: Բուրվառակիրներից մէկը մօտեցնում է խնկամանը և «Եւ ևս խաղաղութեան» ասում. Հայրապետն օրհնում է և խունկ ձգում

բուրվառի մէջ: Դպիրները երգում են «Հրաշափառ» շարականը և թափորը զանգահարութեամբ շարժւում է դէպի տաճար: Աւագ դռնից ներս մտնելիս դպիրները երգում են. «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» շարականը, մինչև Հայրապետը գալիս, կանգնում է Իջման սեղանի առաջ: Թափորի կարգաւորութեան վրայ հսկում է լուսարարապետը, սա է ընդունում նաև սեղանի առաջ Հայրապետին և նրա հետ փոխառփոխ ասում «Ուրախ եղէ ես» սաղմոսը: Տեղապահը միաբանութեան կողմից ողջունում է Հայրապետի գալուստը, իսկ Հայրապետը օրհնում է միաբանութեան և ժողովրդին: Ապա միաբանները զոյգ-զոյգ առաջնորդում են լռելեայն դէպի վեհարան: Հետևեալ օրը կամ երբ կ'հաճի նորընտիր Հայրապետը, միաբանութիւնը ներկայանում է իւր Պետին և համբուրում ձեռքը: Տեղապահը մի առ մի ներկայացնում է ամենքին՝ յիշելով անունները: Հայրապետի գալստեան օրերը երեկոները ճրագալոյց և ժողովրդական տօն է լինում:

Օծման ժամանակը վաղօրօք յայտարարւում է ժողովրդին. Մայր Աթոռի միաբաններից կազմւում է Կարգադիր յանձնաժողով քաղաքներից եկած ներկայացուցիչներին և հիւրերին վայելուչ կերպով ընդունելու և պատուելու: Հեռաւոր քաղաքներից իսկ՝ Պետերբուրգից, Ն. Նախիջևանից, Աստրախանից և այլն պատգամաւորներ են գալիս Հայրապետի ս. օծման հանդիսին ներկայ լինելու և դորանով յայտնելու իրենց որդիական սէրն ու երախտագիտութիւնը դէպի մայրենի, հինաւուրց Աթոռը և նորա աթոռակալը: Գալիս են և թեմական առաջնորդներն ու յաջորդներից շատերը: Տասներկու եպիսկոպոս անհրաժեշտ են հայրապետական օծման ժամանակ: Օծման նաւակատեաց երեկոյեան Մ. Աթոռի միաբանութիւնը շուրջառով զգեստաւորուած, զոյգ-զոյգ խաչակիր, խաչվառակիր և կերոնակիր դպիրներով, չորս բուրվառակիր սարկաւագներով դասաւորւում են վեհարանի առաջ՝ նորընտիր Հայրապետին երեկոյեան ժամերգութեան և ապա հսկման առաջնորդելու: Հայրապետական խաչն ու գաւազանը դրօշակներով առնում են երկու վարդապետներ, ամպհովանին բռնում են ամենից պատուաւոր պատգամաւորները: Դարձեալ «Հրաշափառ» շարականով առաջնորդում են վեհին եկեղեցի: «Ուրախ եղէ» սաղմոսից յետոյ, որ վեհը փոխ առ փոխ ասում է լուսարարապետի հետ, սկսւում է երեկոյեան ժամերգութիւնը, իսկ դրանից յետոյ հսկումն՝ առաւօտեան ժամերգութեան մի մասը՝ մինչև «Հարց»: Ժամերգութիւնից յետոյ՝ միաբանութիւնը և պատգամաւորները դարձեալ լռելեայն առաջնորդում են վեհարան: Հազարաւոր, երփներանգ լոյսերից կազմուած ճրագալոյցը ակնապարար տեսարան է ներկայացնում, իսկ ժողովրդի ցնծութեան և «կեցցէների» աղաղակները բարձրացնում ականատեսի զգացմունքները: Հայրապետի ընդունելութեան, օծման, միւռոնօրհնութեան հանդէսները սրբազան արարողութիւններ լինելով հանդերձ՝ միշտ ժողովրդական տօնի բնաւորութիւն են ստանում: Մեր նիւթից կը հեռանանք, եթէ՝ տանք այդ ամենի նկարագրութիւնը, որքան և հետաքրքրական լինին ազգագրական տեսակէտով:

Կիւրակի օրը, երբ պէտք է օծումը կատարուի, 12 աւագագոյն եպիսկոպոսներ զգեստաւորուում են ընտրեալի հետ վեհարանում և վերև նկարագրուած հանդիսով, ամպհովանու տակ, շուրջառ առած միաբանութեան հետ, խաչով, խաչվառով, քշոցներով, խնկարկութեամբ առաջնորդում են եկեղեցի: Այս զգեստաւորութիւնը իսկապէս պիտի կատարուի խորանում, բայց ժողովրդի բուռն ցանկութեան մասամբ բաւարարութիւն և հանդիսին աւելի շքեղութիւն տալու համար, վեհարանից են զգեստաւորուած եկեղեցի առաջնորդում, ուր անմիջապէս սկսւում է պատարագը: Նորընտիր Հայրապետն է պատարագ մատուցանողը, նորա հետ սեղան են բարձրանում և վեց-վեց կանգնում են Հայրապետի աջ և ձախ կողմից 12 եպիսկոպոս, որոնց համար յատուկ աթոռներ են դրում. ինչպէս միշտ եկեղեցւոյ մէջ, այնպէս և այժմ արարողապետը աւագ լուսարարն է և Հայրապետի սպասաւորը: Պատարագը ընդհատւում է, «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով» աղօթքը արտասանելուց յետոյ՝ կամ գրքից ու աւետարանից առաջ և սկսւում է ձեռնադրութեան և օծման կարգը: Նախ Հայրապետը բարձրաձայն կարդում է իւր ուխտի թուղթը.

«(Այս անուն) Ծառայ Քրիստոսի և Եպիսկոպոս վիճակին (այս անուն), միաբան սրբոյ ուխտիս Էջմիածնի, կամօքն Աստուծոյ և ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ յԱրարատեանս Աթոռ կաթողիկոսութեան ամենայն Հայոց, ապաւինեալ յօգնականութիւն շնորհաց Բարձրելոյն՝ խոստանամ և ուխտեմ առաջի սրբոյ սեղանոյս և աստուածընկալ սուրբ նշանացս, յանձն առնուլ զպաշտօնս զայս Եպիսկոպոսապետութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ, և բոլորապտուղ նուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն աստուածադիր օրինաց և կաթողիկոսական պարտուց, և առաջնորդել ազգիս Հայոց ըստ ուղղափառ վարդապետութեան քրիստոսական կրօնից, ըստ մերոյս եկեղեցւոյ դաւանութեան և ըստ հայրապետական կարգաց և կանոնաց Աստուածապաշտութեան, անստերիւր և անխոտոր ընթանալով յամենայնի ընդ լուսաշաւիղ հետս գնացից արժանաժառանգ յաջորդաց սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի երկրորդ Լուսաւորչի զգուշաւոր պահպանութեամբ իրաւանց Մայր Աթոռոյս Հայաստանեայցս»:

Ապա ընտրեալ Հայրապետը ծունկ է իջնում և նորա շուրջն են բոլորւում 12 եպիսկոպոսները: Եպիսկոպոսներից երկուսը փոխ առ փոխ ասում են ՁԸ. սաղմոսը. իսկ յետոյ մէկը «Աղաչեսցուք զմարդասէրն Աստուած» քարոզը: Աւագագոյն արքեպիսկոպոսը քառասուն «Տէր ողորմեա» անելուց յետոյ՝ աւելացնում է, թէ Աստուածային շնորհը այսինչ ընտրեալին եպիսկոպոսութիւնից կաթողիկոսութեան է կոչում: Բոլոր եպիսկոպոսները ձեռքները դնում են ընտրեալի գլխի վերայ և ասում. «Մենք դնեմք ձեռս ի վերայ» և ալն: Եպիսկոպոսներից մէկը կարդում է «Գոհանամ զքէն՝ Աստուած մշտնջենաւոր»

աղօթքը և ապա հերթով Ս. Գրքի ընթերցուածները և աւետարանը՝ համաձայն Մաշտոցի: Աւետարանի ընթերցումից յետոյ պատարագը դարձեալ շարունակւում է մինչև «Ողջոյն»: Այստեղ նորընտիր Հայրապետը քարոզ է խօսում, եթէ կամենում է:

Ընտրեալը նորից ծունկ է խոնարհում երեսը դէպի ժողովուրդը, և աղօթում է անմռունչ, իսկ եպիսկոպոսները երգում են «Աստուած մեծ և սքանչելագործ» քարոզը, և խնդրում են Աստծուն ընդունել իւր ծառային, որին ընտրել և իւր եկեղեցւոյ առաջնորդութեան է կոչել ինքը, հայցում են օգնական լինել նրան հովուելու իւր հօտը, անարատ պահելու Հայաստանեայց աթոռի առաքելական վերատեսչութեան գործի մէջ: Քարոզից յետոյ աւագագոյն եպիսկոպոսը կարդում է «Տէր Աստուած, արարիչ ամենայն արարածոց» ընդարձակ աղօթքը, ուր յիշւում է, որ Հայաստանը վիճակ ընկաւ երկու առաքեալներին և Գրիգոր Լուսաւորչին: Սրանց բարեխօսութեամբ թող Տէրն ընդունէ ժողովրդի աղօթքը և իւր ծառային «զձեռնադրեալս» ի մէնջ, «զոր դու իսկ ընտրեցեր և ընկալար ի Հայրապետութիւն և յառաջնորդութիւն ազգիս Հայոց»: Սրբազան և սրտառուչ մի րոպէ, երբ նորընծայ Հայրապետը, ժողովուրդը և սրբազնագործ պաշտօնեաները Աստուծոյ օգնութիւնն են խնդրում Հայրապետական պաշտօնը արժանաւորութեամբ վարելու:

Ապա աւագագոյն եպիսկոպոսը սեղանի վրայից վերցնում է ոսկեզօծ աղաւնին սրբալոյս միւռոնով և թափում է նուիրեալի գագաթին, ասելով. «Առաքելոյ աղաւնոյ» շարականը: Նրան ձայնակցում են միւս եպիսկոպոսները և ամենքը միասին բոյթ մատով գագաթին կեդրոնից դէպի ցած են դրոշմում, որով ճառագայթաձև խաչ է ձևանում նորապսակ Հայրապետի գլխին: Այդ գործողութիւնը կատարելու ժամանակ եպիսկոպոսները երգում են «Օրհնեսցի, օծցի և սրբեսցի գագաթն տէր (այս անուն) կաթողիկոսիս» և այլն: Ապա գլխի վերայ են ձգում սպիտակ և ոսկեթել հայրապետական նուրբ քօղը, որ մէկ էլ մահուան ժամանակ է վերան ձգւում: Աջ կողմից կապում են կոնքեռը կամ հայրապետական մախաղը գօտուց, և վերան են ձգում ըստ Մաշտոցի «զնափորտ (շուրջառ) բազմախաչ՝ ունելով նկարակերտ և ասեղնագործ ստորոտս և անկիւնս զարդարեալս»: Բազմախաչ և նկարակերտ նափորտը հին ժամանակներից ի վեր (ԺԲ. դարուց) Հայրապետին յատուկ զգեստ է եղել, այժմ ձգում են ասեղնագործ Ս. Էջմիածնի շրջակայ վանքերի և Լուսաւորչի ձեռքով Հայոց քրիստոնէութիւն ընդունելու տեսարաններով շուրջառը: Ձեռքն են տալիս հովուական գաւազան «զանուանեալն Լուսաւորչի»: Ըստ Մաշտոցի այսուհետև նա կոչւում է «կաթողիկոս ամենայն Հայոց»: Առաքելական և աւետարանական ընթերցուածներից յետոյ՝ եպիսկոպոսները համբուրում են նորապսակ Հայրապետի գագաթը և «ողջոյն» տալիս:

Այնուհետև ս. Հայրապետը շարունակում է պատարագը մինչև «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզը, երբ յիշատակում է իւր բոլոր նախորդ կաթողիկոսներին: Իսկ դպիրները յիշատակում են յիշեալ քարոզի մէջ

նորապսակ Հայրապետին և այնուհետև Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում պատարագների և առաւօտեան ու երեկոյեան ժամերգութեան որոշ քարոզների մէջ: Պատարագը վերջանալուց յետոյ՝ դարձեալ հանդիսաւոր թափոր է կազմւում դէպի վեհարան՝ զգեստաւորուած եպիսկոպոսների և միաբանական ուխտի հետ, առանց Հայրապետի երեսից քօղը վերցնելու «Հրաշափառ» շարականով բերում և նստեցնում են վեհարանի «Ծաղկեայ դահլիճի» կաթողիկոսական աթոռի վերայ: Հանդէսը վերջանում է Հայրապետի «Պահպանիչով»: Ապա ամենքը համբուրում են աջը և օրհնութիւն ստանալով՝ հեռանում:

Մի ժամի չափ հանգստանալուց յետոյ՝ սեղանատան զանգը միաբանութեան, պատգամաւորներին և հիւրերին հրաւիրում է հանդիսաւոր ճաշկերոյթի: Գալիս է և նորապսակ Հայրապետը և բազմում իւր համար յատուկ պատրաստած սեղանին: Ներկայ է լինում տէրութեան ներկայացուցիչը, պրոկուրորը և պաշտօնական անձինք: Հայրապետին սպասաւորում են երկու վարդապետ և երկու հոգի պատգամաւորներից աւագագոյնները: Գաւազանակիրը գաւազանը բարձր բռնած կանգնում է Հայրապետի յետևը: Հայրապետական սեղանի մօտ կանգնում է և Մայր Աթոռի դպրապետ վարդապետը: Ամենայն անգամ երբ ս. Հայրապետը բաժակ պիտի առաջարկէ կամ պիտի խօսէ, դպրապետը բարձր ձայնով երգում է. «Հրամայեա Տէր օրհնութեամբ ասել»: Տիրում է խորին լռութիւն և Հայրապետը խօսում է: Սովորաբար բաժակաճառերը հետևեալներն են լինում: Առաջին բաժակը նորապսակ Հայրապետը առաջարկում է թագաւոր-կայսեր կենացը, կառավարութեան ներկայացուցիչն առաջարկում է Ն. Սրբութեան, տեղապահը տ. փոխարքայի, պատգամաւորներից մէկը տ. տեղապահի, եպիսկոպոսներից մէկը կառավարութեան ներկայացուցչի և ապա հետզհետէ Մ. Աթոռի հաստատութեան, ազգի, միաբանական ուխտի բարգաւաճման և այլ նման բարեմաղթութիւններ՝ Կարգադիր յանձնաժողովի գիտութեամբ և կարգադրութեամբ: Հայրապետի հեռանալու ժամանակ ամենքը ոտքի են կանգնում, հետևորդներն ու սպասաւորողները ուղեկցում են մինչև վեհարան:

Հետևեալ օրը Ն. Սրբութեան խմբովին ներկայանում են պատգամաւորները և իրենց որդիական շնորհաւորանքներն ու իղձերը յայտնելուց յետոյ՝ օրհնութիւն ստանում և մեկնում իրենց տեղերը: